ԿՐՈՆԻՑ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՆՈՐ ԴԱՍԸՆԹԱՑԻ ԲԱՑՈՒՄԸ ԱՐԱՐԱՏՅԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ ԹԵՄՈՒՄ

«Տէր, ուղղեա եւ առաջնորդեա,
գնալ յարդարութեան ճանապարհն
եւ ի կեանսն յաւիտենից...»:

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի նախաձեռնությամբ Արարատյան հայրապետական թեմում բացվեց կրոնից ուսուցիչների պատրաստման հերթական երկամյա դասընթացը:

Բացման հանդիսավոր արարողությունն անձամբ նախագահեց Ամենայն Հայոց Կաթողիկոս Նորին Սուրբ Օծություն Տ. Տ. Գարեգին Առաջինը: Ներկա էին Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը, Մայր Աթոռիս հոգևոր ճեմարանի վերատեսուչ Հոգեշնորհ Տ. Հայկազուն ծայրագույն վարդապետ Նաջարյանը, հոգևոր ճեմարանի դասախոս Հոգեշնորհ Տ. Գրիգոր վարդապետ Չիֆթչյանը, Քրիստոնեական դաստիարակության և քարոզչության կենտրոնի տնօրեն Հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Միրզախանանը, Սուրբ Գրիգոր Լուսավորիչ կիրակնօրյա դպրոցի տնօրեն Հոգեշնորհ Տ. Բագրատ աբեղա Գալստյանը, Արժանապատիվ Տեր Հայրեր, Բարեշնորհ սարկավագներ, հյուրեր:

Տերունական աղոթքից հետո, բացման խոսքով հանդես եկավ Հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանը: Նա հանգամանալից բացատրեց դասընթացի գաղափարն ու նպատակը և տվեց գործնական ցուցումներ՝ արձանագրվել ցանկացողների համար:

Կրոնի ապագա ուսուցիչներին իր սրտի ու բարեմաղթանքի խոսքերն հղեց Արարատյան հայրապետական թեմի առաջնորդական փոխանորդ Գերաշնորհ Տ. Գարեգին արքեպիսկոպոս Ներսիսյանը՝ միաժամանակ խորին

շնորհակալություն հայտնելով ազգիս Վեհափառ Հորը՝ մեծագույն հարգանքի և այդ պահին այնտեղ ներկա գտնվելու առիթով:

Այնուհետև ներկաներին իր հայրական պատգամն ուղղեց Ամենայն Հայոց Հայրապետը: Խոսելով մանկան հոգեկան ներաշխարհի, նրան հետաքրքրող երևույթների, կենդանի ու առողջ մանկավարժությունից պահանջվող առանձին խնդիրների, ինչպես նաև աճող սերնդի հոգևոր ու կրոնական դաստիարակության կարևորության մասին, Նորին Սրբությունը մեկ անգամ ևս ներկաներին հիշեցրեց, որ մանկանը կրթելու ամենակարևոր գործոնը սերն է և սեփական անձը որպես դասագիրք ունենալը: Իր հոգում սեր չունեցող ուսուցիչը երբեք չի կարող լավ մանկավարժ լինել և ըստ այդմ էլ անկարող է հասարակության համար պիտանի մարդ դաստիարակել: Իր համառոտ, սակայն այնքան կարևոր ու արժևորող խոսքը Վեհափառ Տերը որակեց որպես առաջին դաս կամ դասախոսություն՝ իր իսկ բառով ասած: Նա շեշտեց նաև, որ մանկավարժությունը երբեք չի կարելի ուսուցանել: Վերջինս նման է Աստծուց տրված շնորհին: Ամեն մի ուսուցիչ, որ հանձն է առնում կրոն դասավանդել, պետք է այն համեմի կյանքով: Ցանկացած մի խոսք կամ արտահայտություն, որ վերցվում է Աստվածաշունչ մատյանից, նախ և առաջ պետք է երեխան հասկանա կյանքում եղող որևէ միջադեպի զուգակցումով: Այլապես դրանք զուտ գաղափարներ կմնան երեխայի համար, որոնք նա պարտավորված պիտի լինի գոց հիշել:

Հաջողություն մաղթելով Աստվածային խոսքի ներմանման դժվարին, բայց քաղցր ու անկրկնելի ուղին ընտրած 150 դիմորդներին, Վեհափառ Հայրապետը խոստացավ պարբերաբար այցելել նրանց, ծանոթանալ ձեռք բերած գիտելիքների մակարդակին, ինչու չէ, նաև ինքն էլ դասախոսել, եթե ժամանակը ների:

Մեկ անգամ ևս դիմելով ապագա ներմնացաններին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի Քրիստոնեական դաստիարակության բաժանմունքի վարիչ-տնօրեն Հոգեշնորհ Տ. Վազգեն աբեղա Միրզախանյանը հիշեցրեց, որ հաջորդ շաբաթ, երբ պաշտոնապես հավաքվեն առաջին դասին, ոչ ոք թող չմոռանա օրվա հետ առնչվող մեծ խորհուրդը, քանզի հենց այդ օրը տոնվելու է մեր թարգմանիչ հայրերի սրբալույս հիշատակը, այսինքն՝ Թարգմանչաց գեղեցիկ ու իմաստալից տոնը:

«Պահպանիչ»-ով և «Հայրապետական մաղթերգ»-ով վերջակետվեց անդրանիկ դասախոսությունը, որը նաև լսարանի բացման երկար սպասված արտառուչ հանդիսությունն էր:

Մ. ՎԱՐԴԱՆՅԱՆ